Ազգ
Azg
26 ՅՈՒՆԻՍ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 107(5190)
ISSN: 1829-1651

# Իլհամ Ալիեւը աջակցություն է խնդրում հայկական կողմի՞ց

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Ալիեւի եւ Սարգսյանի հանդիպմանը պետք է սպասել ոչ վաղ, քան Ադրբեջանի նախագահական ընտրություններից հետո»,- այսպիսի կտրուկ խորագրի տակ է հանդես եկել իրեն «Վ. Տ.» անվանած ադրբեջանցի մեկնաբանը (տես http://www.vesti.az/news/163199): Այդ բավական ծավալուն նյութում ուշադրության արժանի է երկու ընդգծում:

Առաջինը ձեւակերպված է այսպես. «Երեւանը եւ Բաքուն շարունակում են ...ղարաբաղյան հակամարտության կարգավորման վեց սկզբունքները շարադրել իրենց ձեռնտու դիրքերից: Բաքվի տեսակետից՝ այդ սկզբունքները ենթադրում են առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի «շրջակայքի ադրբեջանական բոլոր 7 շրջանների ազատագրում» (չակերտները մերն են- Վ. Ա.), ապա նոր միայն «Ադրբեջանի այդ ռեգիոնի» (չակերտները մերն են- Վ. Ա.) վերջնական կարգավիճակի որոշում: Երեւանի տեսակետից՝ հիմնարար սկզբունքներն ուղղված են Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի որոշմանը հանրաքվեի միջոցով, որը հակամարտության բոլոր կողմերի համար պետք է ունենա իրավական պարտադիր ուժ»:

Ինչպես տեսնում ենք, իրավիճակը մեկնաբանված է բավական բարեխղճորեն: Եթե, իհարկե, բացառենք, որ ղարաբաղյան կարգավորման միջնորդական հայեցակարգն ադրբեջանցի հեղինակը ներկայացրել է որպես «Երեւանի տեսակետ»: Այդ «թեթեւամտության» համար նրան կարելի է ներել, քանի որ Բաքվի տեսակետը շարադրելիս նա անկեղծ է մինչեւ վերջ:

Տես էջ 2

# Հայաստանում օտարերկրյա ներդրումները նվազել են

**Դիլիջանի միջազգային դպրոցին հարկային եւ մաքսային արտոնությունների տրամադրումը բուռն քննարկումների տեղիք տվեց խորհրդարանում: Հիշեցնենք, որ այդ ծրագրով նախատեսվում է 550 մլն դոլարի ներդրումներ իրականացնել: Ենթադրվում է, որ Դիլիջանի տարածաշրջանում դա նկատելի տնտեսական աշխուժություն կառաջացնի: Սակայն, որքան էլ տարօրինակ է, այս նախագծին տրվելիք արտոնությունների ընդգծված դեմ տեսակետներ հնչեցին, բնականաբար՝ հիմնականում 90-ականների իշխանությունները ներկայացնող պատգամավորների կողմից:**

**Զերծ մնալով մեկնաբանություններից այդ կապակցությամբ, նշենք միայն, որ այս պահին այդ ծրագրին համարժեք խոշոր ներդրումային ծրագիր Հայաստանում ուղղակի չկա: Այս առումով հետաքրքրական է, թե այս տարվա առաջին եռամսյակում որքա՞ն օտարերկրյա ներդրումներ են կատարվել մեր երկրում, ի՞նչ համեմատության մեջ են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դրանց ո՞ր մասն է ուղղակի եւ ո՞ր երկրներից է կատարված:**

**Այս տարվա հունվար-մարտ ամիսներին, համաձայն ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանում կատարվել է 131 մլն դոլարի ներդրում (առանց պետական կառավարման եւ բանկային համակարգով ստացվածների), որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի (148,7 մլն դոլար) համեմատ նվազել է 11,9 տոկոսով: Այս ներդրումներից ուղղակի ներդրումները կազմել են 57,7 մլն դոլար, որը նույնպես նվազել է՝ 35,4 տոկոսով (նախորդ տարվա առաջին եռամսյակին՝ 89,3 մլն դոլար):**

**Ամենաշատ ներդրումները Հայաստանում կատարել են Կանադան՝ 34 մլն դոլար, Արգենտինան՝ 26,9 մլն դոլար, Ֆրանսիան՝ 25 մլն դոլար, Ռուսաստանը՝ 21,7 մլն դոլար, Ֆինլանդիան՝ 9,5 մլն դոլար: Նրանք նկատելիորեն առաջ են անցել Հայաստանում ներդրում կատարած մյուս երկրներից: Համեմատած անցյալ տարվա նույն ժամանակահատվածի հետ՝ ավելացել են միայն Ֆրանսիայից, Արգենտինայից եւ Ֆինլանդիայից կատարված ներդրումները:**




**Այսպիսով, ակնհայտ է, որ ներդրումների ծավալը Հայաստանում նվազել է, եւ նոր ներդրումային ծրագրերի անհրաժեշտություն կա: Այս առումով այնպիսի խոշոր ներդրումային ծրագիր, ինչպիսին Դիլիջանի միջազգային դպրոցն է, պետք է որ գոնե արհեստական խոչընդոտների չհանդիպի:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Պայմանագրային զինծառայողը լրտեսել է հօգուտ Ադրբեջանի

ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում լրտեսության վերաբերյալ քննվող քրեական գործի շրջանակներում իրականացված քննչական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ձերբակալվել է պաշտպանության նախարարության N զորամասի պայմանագրային զինծառայող, Կապան քաղաքի բնակիչ, 1982-ին ծնված Մանե Արտաշեսի Մովսիսյանը: «**Ազգ**»-ին ԱԱԾ մամուլի կենտրոնից փոխանցեցին, որ ձեռք են բերվել անհերքելի փաստեր, որ նախորդ տարվա հունվարից՝ մինչ զինծառայության անցնելը, համացանցի միջոցով ծանոթացել է «Odnoklasniki» mail.ru agent, «Facebook» սոցցանցերում «S Dr», «Seryan Dervisyan», «Tigran Dervisyan» պրոֆիլներով հանդես եկող, Թուրքիայի տարածքում գործող Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակցի հետ, եւ նամակագրական կապը շարունակվել է նաեւ Մովսիսյանի ՊՆ-ում ծառայության անցնելուց հետո: Առկա տվյալների համաձայն՝ Մովսիսյանն Ադրբեջանի հատուկ ծառայություններին է փոխանցել ծառայության ընթացքում իրեն հասանելի դարձած Հայաստանի վերաբերյալ ռազմական բնույթի պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Նմանատիպ հանցագործություն կատարելու համար ԼՂՀ ԱԱԾ-ն ձերբակալել է 2 անձանց, որոնցից մեկը ԼՂՀ ՊԲ զինծառայող է: Նրանք էլ համացանցի միջոցով փոխանցել էին տեղեկություններ վերոնշյալ պրոֆիլներով հանդես եկող Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակցին, եւ այժմ ԼՂՀ դատարանում նրանց հանդեպ ընթանում է դատաքննություն:

Հ. Հ.



Այսօր լրանում է **Արտո Չաքմաքչյանի** ծննդյան 80-ամյակը: Եվ երբ ինքը ասում է, որ արվեստը չի կարող գոյատեւել առանց լարումի, ապա դա հնչեցնում է քանդակի ընդգծված դրամատիզմով ու ճիգով, ինքը, իր էությունը ապրում են մարդու այս ողջ դրամատիզմը եւ զգայնորեն փոխանցում մեզ:

Այստեղ, իրենից հեռու՝ Հայաստանում իր արվեստակից-խոհակից ընկերների շրջանակը, որքան էլ սեղմ, բայց հրաշալի գիտի, ճանաչում ու գնահատում է Չաքմաքչյանի ոչ միայն արվեստի մեծությունը, նաեւ իր մարդկային նկարագրի ազնվական էությունը:

Շնորհավոր ծնունդդ, սիրելի Վարպետ:

# Նոր կառավարություն Հունաստանում

Հունաստանի վարչապետ Անտոնիս Սամարասը փոխել է կառավարության կազմը: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ փոփոխությունների պատճառը գործընկերներից մեկի դուրս գալն է կառավարող կոալիցիայից: Խոսքը «Ժողովրդավարական ձախեր» կուսակցության մասին է, որը նախարարական մի քանի պաշտոն է զբաղեցնում:

Վերակազմված կառավարության մեջ մնացել է երկու մասնակից՝ «Նոր ժողովրդավարությունը» վարչապետ Սամարասի գլխավորությամբ եւ PASOK-ի սոցիալիստները, որոնց առաջնորդ Էվանգելոս Վենիզելոսը փոխատեղումների արդյունքում այժմ զբաղեցնում է փոխվարչապետի եւ արտգործնախարարի պաշտոնները:

Կառավարող կոալիցիայից «Ժողովրդավարական ձախեր» կուսակցության դուրս գալու պատճառը ERT պետական հեռուստառադիոընկերության փակումն էր: Դա ամենափոքր կուսակցությունն էր կոալիցիայում: ERT-ի փակման մասին հայտնի էր դարձել հունիսի 11-ին: Իշխանությունները ընկերության աշխատանքը դադարեցրին բյուջետային միջոցների անբավարարության պատճառով: Հեռուստառադիոընկերության 2,5 հազար աշխատակիցներ հայտնվեցին չվճարվող արձակուրդի մեջ: Այդ որոշումը երկրում վրդովմունքի ալիք բարձրացրեց: Ի պաշտպանություն ERT-ի աշխատողների անցկացվեցին բողոքի բազմամարդ ցույցեր:

# Հասարակական տրանսպորտը վերադառնում է Գյումրի

*Բերված չինական 10 նոր ավտոբուսները դրա առաջին լուրջ քայլն են*

**Երեկ առավոտից Գյումրու կենտրոնական հրապարակում կողք կողքի կանգնած չինական արտադրության 10 նոր ավտոբուսներն այս քաղաքի համար տարաշխարհիկ տեսարան եւ անսովոր տոնականություն էին ստեղծել: Իսկ երբ իմացվեց, որ դրանք բերվել եւ այսուհետեւ գործելու են քաղաքի երթուղիներում, ոմանք հաճելի զարմանքից նույնիսկ հուզմունք ապրեցին: Այն բանից հետո, երբ հոգսաշատ այս բնակավայրում տարիներ առաջ պարզապես հանվեցին-վերացվեցին տրոլեյբուսի գծերը, իսկ ավտոբուսային պարկը գնած քաղաքապետարանը ներքաղաքային երթուղիներից հետզհետե դուրս մղեց աշխատող առանց այն էլ հին ավտոբուսները, մարդկանց հարկադրելով այդուհետեւ կռացած ու ճնշահեղձ երթեւեկել, միայն, ավելացող նորահայտ «գծատերերի» երթուղային տաքսի «Գազել»-ներով, հանրապետության երկրորդ քաղաքն ըստ էության մնացել էր առանց հասարակական տրանսպորտի: Դեռեւս երեւացող հատուկենտ հին ավտոբուսներն ընդամենը փոքրիկ բացառություն էին: Այս նոր ավտոբուսների ներկրումն ու երթեւեկը նախաձեռնելով՝ համայնքային ներկա իշխանությունը գյումրեցիներին վերադարձնում է հասարակական տրանսպորտը, նաեւ անելով քաղաքակիրթ եւ արժանապատիվ երթեւեկության պայմաններ ստեղծելու առաջին քայլը:**



**Տեղի ունեցած փոքրիկ հանդիսությունից հետո փորձնական շրջայց կատարած առաջին նոր ավտոբուսի ուղեւորները եղան Գյումրու քաղաքապետը, նրա տեղակալն ու լրագրողները, Սամվել Բալասանյանը տարիների ընդմիջումից հետո առիթ ունեցավ Գյումրու փողոցներով երթեւեկելու ավտոբուսով, ավելի լավ հասկանալով գյումրեցի «շարքային» ուղեւորին:**

**Նոր ավտոբուսները, որոնցից նախատեսվում է առաջիկայում ներկրել եւս մի քանիսը, առայժմ կերթեւեկեն ներքաղաքային երկու երթուղիներում: Մասնավորապես համար 1 երթուղին քաղաքի կենտրոնը սովորականի պես կկապի մի կողմից «Շիրակ» օդանավակայանի եւ «Ստրոմմաշինա» թաղամասի, մյուս կողմից՝ քաղաքի հակառակ ծայրում գտնվող «Անի» թաղամասի հետ: Քաղաքապետի հրահանգով՝ ավտոբուսները հունիսի մնացած մի քանի օրերին ուղեւորներին կփոխադրեն անվճար, որից հետո փոխադրավարձը հավանաբար կլինի 100 դրամ:**

**Ասենք շնորհավոր...**

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Մեկ օրում՝ 3200 դիպլոմ





Մանկավարժական համալսարանում մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ 2012-2013 ուսումնական տարվա ավարտական դիպլոմների հանձնման պաշտոնական արարողությունը:

10 ֆակուլտետներից ուսումնառության ընթացքում լավագույն արդյունք ցուցաբերած 2-ական շրջանավարտի, ինչպես նաեւ հեռակա համակարգի երկու շրջանավարտի կարմիր դիպլոմներ հանձնեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար, նախարար **Վաչե Գաբրիելյանը**:

Վերջինս, կառավարության եւ համալսարանի խորհրդի անունից, շնորհավորելով օրվա հերոսներին, նշեց. «Սիրելի ներկա եւ ապագա մանկավարժներ, սա պատմական օր է ձեզ համար. դուք ստանում եք առհավատչյան այն բանի, որ ունեք գիտելիքներ եւ ի զորու եք դրանք փոխանցել հաջորդ սերունդներին: Դարեր շարունակ ուսուցիչը եղել է մեր ազգի գոյատեւման եւ հզորացման կարեւորագույն երաշխիքը: Դուք կրում եք ծանր, բայց հաճելի՝ ուսուցչի նվիրական կոչումը. առավել դժվար գործ, քան լինել ուսուցիչ, կրթել ապագա սերունդներին, դժվար է պատկերացնել: Շրջանավարտներդ այլեւ պատրաստ եք մեր՝ ազատ, անկախ Հայաստանում լծվել ապագա սերնդի կրթման կարեւորագույն եւ ազնիվ գործին»:

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը**, օրհնելով ներկաներին եւ շնորհավորելով ամենաբարձր՝ մանկավարժի կոչմանն արժանանալու առթիվ, մաղթեց, որ Տիրոջ խաչը պահապան, ուղեցույց եւ մարդակից լինի նրանց:

Պաշտոնական մասին հաջորդած տոնական համերգի ընթացքում ջազային-էստրադային կատարումներով հանդես եկավ Հանրային ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը՝ դիրիժոր, արվեստի վաստակավոր գործիչ Երվանդ Երզնկյանի ղեկավարությամբ:

Ի դեպ, մեկ օրում բուհի բոլոր շրջանավարտներին դիպլոմ հանձնելու արարողությունը դարձել է գեղեցիկ ավանդույթ: Մեկ օրում Մանկավարժական համալսարանը բակալավրի եւ մագիստրոսի դիպլոմ առկա եւ հեռակա բաժիններում շնորհեց 3200 շրջանավարտի:

Տոնական միջոցառմանը ներկա էին Մանկավարժական համալսարանի կառավարման խորհրդի անդամները՝ պատգամավորներ, նախարարներ, ՀՊՄՀ ռեկտորը, բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու բարձրաստիճան այլ հյուրեր:

# Նավասարդ արք. Կճոյան. Օֆշորային կազմակերպության հետ կապ չունեմ

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը «Արմենպրես»-ի հարցազրույցում ասել է, որ Կիպրոսում գրանցված օֆշորային կազմակերպության հետ որեւէ առնչություն չունի: «Որեւէ առնչություն չունեմ եւ չեմ կարող տեղեկացված լինել դրա ծալքերին»: Կճոյանն ասել է, որ այժմ հետախուզման մեջ գտնվող Աշոտ Սուքիասյանի հետ որեւէ շփում չի պահպանում: «Աշոտ Սուքիասյանը Սբ Սարգիս եկեղեցու խաչքավոր է, այդ շրջանակներում ես իր հետ բավական մտերիմ եմ եղել: Բազմիցս ճամփորդել ենք միասին եւ, կարծես ճակատագրի հեգնանքով, 2011-ին ընկերներից մեկի հրավերով մի քանի օրով այցելել ենք Կիպրոս՝ Նիկոսիա, ու ներկա ենք գտնվել Աշոտի ընկերոջ ընտանեկան միջոցառմանը: Այդ ժամանակ ո՞ւմ մտքով կանցներ, որ Աշոտն իմ անունը կօգտագործի իր կազմակերպությունը գրանցելիս: Ես գիտեի, որ նա Կիպրոսում ընկերություն ունի, այլ մանրամասներ հայտնի չեն», ասել է Կճոյանը՝ հավելելով, որ Աշոտ Սուքիասյանի՝ Հայաստանը լքելուց հետո իրենց շփումը եղել է Նոր տարուն հեռախոսով: Անդրադառնալով «Բենթլի» մեքենային, որ նվիրել է Սուքիասյանը, Կճոյանն ասաց, որ «Բենթլի»-ով չի երթեւեկում, նախընտրում է օգտվել ծառայողական մեքենայից եւ մեքենան համարում է զուտ նվեր:

Հ. Հ.

# Թողարկվել է «Ազգային դրամի 20 տարին» նոր արծաթե հուշադրամը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է ՀՀ ազգային դրամի 20 տարուն նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին ՀՀ զինանշանն է եւ դրամի 20-ամյակի տարբերանշանը: ՀՀ զինանշանի ֆոնին ՀՀ թղթադրամների պաշտպանական հատկանիշները (գիլյոշ եւ պաշտպանական ներդիծ) նմանակող պատկերներ են: Դրամի 20-ամյակի տարբերանշանից ձախ թողարկման տարեթիվն է՝ «2013», շրջագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» եւ «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունները:

Հուշադրամի դարձերեսին ՀՀ կենտրոնական բանկի շենքն է եւ ՀՀ թղթադրամների պաշտպանական հատկանիշները (գիլյոշ եւ թափանցիկ պատկեր) նմանակող պատկերներ են, շրջագծով՝ «ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԻ 20 ՏԱՐԻՆ» եւ «20 YEARS OF NATIONAL CURRENCY» մակագրությունները:




## Հուշադրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9990 |
| Քաշը | 31,1 գ |
| Տրամագիծը | 38,0 մմ |
| Դրամաշուրթը | հարթ, համարակալված |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 500 հատ |

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# Համագործակցում են Երեւանի ու Ստեփանակերտի բժիշկները

**«Երեւանի շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ի մասնագետները հունիսի 23-ից Ստեփանակերտում են՝ համաձայն Երեւանի ու Ստեփանակերտի քաղաքապետարանների միջեւ կնքված համագործակցության: Մասնագետների Արցախ մեկնելը նպատակ է հետապնդում տեխնիկական եւ մեթոդական աջակցություն ցուցաբերել ԼՂՀ մայրաքաղաքի շտապ բուժօգնության ծառայությանը:**

**Երեւանի քաղաքապետարանից տեղեկացանք, որ «Երեւանի շտապ բուժօգնության» մասնագետները Ստեփանակերտում են հունիսի 23-ից, եւ տեղի «Շտապ բուժօգնություն» կայանի բժիշկների հետ մասնակցում են կանչերին, ցուցաբերում բժշկական անհրաժեշտ օգնություն՝ տեղում կատարելով փորձի փոխանակում:**

**Հյուրընկալելով Երեւանից ժամանած բժիշկներին՝ Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել նրանց՝ ցուցաբերվող աջակցության համար, հույս հայտնել, որ նման այցերը կլինեն շարունական, եւ Ստեփանակերտի շտապ օգնության կայանի գործունեությունն աստիճանաբար կհամապատասխանեցվի ժամանակակից պահանջներին: «Երեւանի շտապ բուժօգնություն» ՓԲԸ-ի տնօրեն Թագուհի Ստեփանյանը ներկայացրել է այցի շրջանակում իրականացվող աշխատանքները:**

**Ծրագրի հերթական փուլը շարունակվելու է մինչեւ հունիսի 26-ը:**

**Ի. Պ.**

# Իլհամ Ալիեւը աջակցություն է խնդրում հայկական կողմի՞ց

*1-ին էջից*

**Շարունակելով խորհրդածությունները, vesti.az-ի հեղինակը եզրահանգում է, որ «մադրիդյան սկզբունքների վերաբերյալ Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքորոշումներում որեւէ փոփոխություն, այսպիսով, չկա, դրա համար էլ նախագահների առաջիկա հանդիպման հարցը մնում է բաց»: Սա, փաստորեն, ակնարկ է, որ միջնորդների անունից մամուլ «սպրդած՝ մինչեւ ամռան վերջը-աշնան սկիզբը Սարգսյան-Ալիեւի հանդիպման հավանականության» մասին տեղեկատվության հանդեպ պաշտոնական Բաքուն հոռետեսորեն է տրամադրված:**

**Եվ հենց այս կետում էլ vesti.az-ը հնչեցրել է երկրորդ ուշագրավ «մեսիջը»: Ըստ այդմ՝ «միջնորդները, ակնհայտ է, հակամարտության գոտում լարվածության էսկալացիա թույլ չտալու խնդիրը՝ նախագահական ընտրություններով պայմանավորված՝ Ադրբեջանում քաղաքական կրքերի բորբոքումը, կլուծեն, ինչպես որ կարողացան դա անել Հայաստանի նախագահի ընտրությունների շրջանում»:**

**Կարելի՞ է ասածը հասկանալ այնպես, որ Իլհամ Ալիեւը «միջնորդների միջոցով» հայկական կողմին պարզապես խնդրում է «չօգտագործել նախագահական ընտրություններով պայմանավորված՝ Ադրբեջանում ներքաղաքական կրքերի բորբոքման պահը»: Ադրբեջանական քարոզչության համար սա նոր նրբերանգ է: Թերեւս դրանով է պայմանավորված, որ ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սամադ Սեիդովը Ստրասբուրգում ուղղակի բաց տեքստով խնդրել է, որ Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը չմերժի ադրբեջանցիների հետ հանդիպման առաջարկը:**

**Ներքաղաքական «նուրբ» իրավիճակում հայտնված Իլհամ Ալիեւին, ըստ երեւույթին, խիստ անհրաժեշտ է, որ մինչեւ հոկտեմբեր ղարաբաղյան կարգավորման բանակցություններում ոչինչ տեղի չունենա: Իսկ դա նշանակում է, որ Բաքվում «Ադրբեջանի տեսակետն արտացոլող» միջազգային անդրադարձի հույս պարզապես չունեն:**

# Վարկերի եւ տուգանքների վճարում՝ նաեւ բջջայինից

**ՄոբիԴրամի միջոցով այժմ կարելի է բջջայինից համալրել թե՛ սեփական եւ թե՛ մտերիմների բանկային հաշիվները, վճարել հայաստանյան բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը, ինչպես նաեւ ՀՀ ճանապարհային ոստիկանության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ակտերով տուգանքները:**

**Հեռախոսից վարկերի վճարում կատարելուց առաջ անհրաժեշտ է մեկ անգամ այցելել անձնական էջ, «Պրոֆիլ» բաժնից ընտրել «Բանկային հաշիվներ» ենթամենյուն եւ լրացնել համապատասխան տվյալները: ՀՀ ճանապարհային ոստիկանության տուգանքների դեպքում վերոնշյալ քայլերն անհրաժեշտ չեն:**

**Հաջորդ քայլով, ՄոբիԴրամի USSD մենյուից այցելեք «Փոխանցումներ» բաժինը, այնուհետեւ՝ «Դեպի այլ համակարգեր եւ բանկեր» բաժինը: ՄոբիԴրամի USSD մենյու այցելելու համար պարզապես հավաքեք *444# Ձեր բջջայինից եւ հետեւեք հրահանգներին:**

**Այս ծառայությունները հասանելի են նաեւ առցանց:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է զանգահարել ՄոբիԴրամի թեժ գիծ՝ 444 կամ 093297444:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշուապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի




# Մոսկվայի «Նոյյան տապանը»

Մոսկովյան մետրոյի «Դոստոեւսկայա» կայարանի մոտ գտնվող շենքերից մեկում տեղավորված է ռուսաստանյան մամուլի հեղինակավոր հրատարակություններից մեկի՝ ռուսալեզու «Ноев Ковчег» («Նոյյան տապան») թերթի խմբագրատունը: Ամիսը երկու անգամ լույս տեսնող թերթի գլխավոր խմբագիրը Ռուսաստանի հայ համայնքի ազդեցիկ դեմքերից մեկն է՝ **Գրիգոր Անիսոնյանը**: Նրա ընդարձակ աշխատասենյակը զարդարված է Հայաստանն ու Արցախը հիշեցնող զանազան գեղանկարներով եւ առարկաներով:

Գրիգոր Անիսոնյանը ծնվել է 1951 թ. Թիֆլիսում: Ավարտել է Երեւանի պետհամալսարանի



բանասիրության ֆակուլտետի լրագրության բաժինը: Նրա վարվելաձեւում զգացվում է խորհրդային ժամանակներից պահպանված նրբանկատությունը, որը դիմացել է վարչակարգի փոփոխման վայրիվերումներին եւ Բորիս Ելցինի կառավարման քաոսային տասնամյակի փորձություններին:

Խմբագրատեր տարբեր առիթներով հպարտությամբ հիշեցնում է, որ ժամանակի ընթացքում ռուսալեզու աշխարհում լուրջ եւ ազդեցիկ հրատարակություն դարձած իր թերթը 100 տոկոսով անկախ է: Եվ սա հիմքեր ունի:

Այն հարցին, թե որքան է թերթի տպաքանակը, նա, հոգոց հանելով, պատասխանում է, թե «Ноев Ковчег»-ը տպագրվում է ընդամենը... 105 հազար օրինակով: «Իմ նպատակն է հասցնել 150 հազարի, բայց դրա համար կպահանջվեին ֆինանսական միջոցներ», ասում է Անիսոնյանը: Հայաստանի եւ սփյուռքի հայկական մամուլի մյուս ներկայացուցիչները կարող են միայն նախանձել նրա այդ ցանկությանը:

«Մենք բաժանորդներ ունենք Ռուսաստանում եւ ԱՊՀ-ում՝ Մինսկում, Ստավրոպոլում, Դոնի Ռոստովում, Վլադիվոստոկում եւ այլուր», պատմում է գլխավոր խմբագիրը: Հայկական նորաստեղծ գաղթօջախները նրան հաճախ հրավիրում են

հրապարակային ելույթներ ունենալու:

Խորհրդային ժամանակաշրջանում Գրիգոր Անիսոնյանը երկար ժամանակ աշխատակցել է Հայաստանի «Կոմունիստ», «Սովետական Հայաստան», «Հայրենիքի ձայն» թերթերին եւ այլ լրատվամիջոցների, իսկ հետո դարձել է Մոսկվայում «Արմենպրես» եւ «Նոյյան տապան» գործակալությունների թղթակիցը: Լինելով նաեւ հրատարակիչ՝ նա մեկ մատենաշարի մեջ ընդգրկել է իր թերթի որոշ լավագույն հեղինակների երկերը: Նրա համար հղումների արժանի միակ թերթը 19-րդ դարի վերջերին Թիֆլիսում հրատարակված «Մշակն» է: Ի դեպ, Գրիգոր Անիսոնյանը, որ-

տես խմբագրատես, հրատարակիչ եւ հրապարակախոս, մանկավարժի դեր է կատարում: Նրա լսարանը միայն հայկական հանրությունը չէ. ենթադրվում է ընթերցողների շրջանակում ընդգրկել նաեւ Ռուսաստանի ազդեցիկ վերնախավին: Անշուշտ, նա իր ասպարեզում միայնակ չէ մոտ 2,5 միլիոնանոց հայկական համայնք ունեցող այդ լայնարձակ երկրում: «Ноев Ковчег»-ից բացի՝ լույս են տեսնում նաեւ ուրիշ, առավելապես մշակութային կամ համայնքային պարբերականներ, ինչպիսիք են «Անիվը» Մինսկում, «Երեւանը» Մոսկվայում, ինչպես նաեւ «Երկրամաս» թերթը: Դրանք բոլորը ռուսալեզու են եւ ունեն ընթերցողների պատկառելի լսարան:

1990-ականների սկզբներին՝ Հայաստանի մութ ու ցուրտ տարիներին Մոսկվա տարագրված Գրիգոր Անիսոնյանը այնտեղ 1997-ին հիմնեց «Ноев Ковчег»-ը: Ռուսաստանն այն ժամանակ դանդաղորեն դուրս էր գալիս Ելցինի կառավարման խառնակ տարիների քաոսից: «Ноев Ковчег»-ը գործունեություն ծավալեց անցումային ժամանակաշրջանում, իր 80 թղթակիցների ջանքերով լուսաբանեց Հայաստանի եւ Արցախի, ինչպես նաեւ Հարավկովկասյան ամբողջ տարածաշրջանի իրադարձությունները: Երկշաբաթաթերթի թղթային տարբերակը վաղուց ուղեկցվում է իր էլեկտրոնային կրտսեր եղբոր շատ հարուստ բովանդակությամբ: Այսպիսով՝ թղթային տարբերակի կողքին գոյություն ունի զուգահեռ կառույց. www.novostink.ru տեղեկատվական կայքէջը անսպառ աղբյուր է ռուսախոս այն բոլոր լրագրողների համար, ովքեր ուզում են վավերական նյութեր քաղել Հայաստանի եւ նրան առնչվող աշխարհաքաղաքական հարցերի վերաբերյալ: «Այդ կայքէջի եւ մեր թերթի թղթային տարբերակի միջոցով մենք առաջին հերթին դիմում ենք Ռուսաստանի կառավարական մարմինների լավատեղյակ անձանց. մեր ընթերցողները մասնավորապես Կովկասի հանրապետությունների ղեկավարների մեծամասնությունը եւ Ռուսաստանի արտգործնախարարությունը, որը երկու շաբաթը մեկ ստանում է թերթի 50 օրինակ», ասում է խմբագրատերը:

Անիսոնյանի համակարգչի վրա երեւում են կայքէջի այցելուների թիվը եւ նրանց երկրները: Կայքէջի բարձր վարկի վկայություններից այն է, որ ամենօրյա այցելությունների թվով Ադրբեջանը զբաղեցնում է 3-րդ տեղը: Գրիգոր Անիսոնյանը եւ մոսկովյան փոքրաթիվ աշխատակազմը հպարտանում են դրանով: Նա մտադիր չէ փոխել թերթի լեզուն եւ անցնել հայերենի, քանզի կարեւոր է համարում, որ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաները կարդան իր վերլուծությունները եւ ըմբռնեն Ղարաբաղի հակամարտության նկատմամբ հայերի դիրքորոշումը:

«Մենք բավարարվում ենք գլխավոր բաներով», ասում է՝ հիշեցնելով, որ քաղաքական էջերը զբաղեցնում են թերթի թղթային տարբերակի մոտավորապես 2/3-ը: «Մենք պետք է անհավասար ուժի զենքերով հակակշռենք ադրբեջանական լոբբիի ներկայացուցիչներին: Վերջիններս՝ փող չխնայելով, ռուսներին ողողում են պատմական ճշմարտության խեղաթյուրմանն ուղղված քարոզչությամբ», ասում է խմբագրատերը: Ինչ վերաբերում է խմբագրությունում երիտասարդների զբաղեցրած տեղին, նա պատմում է, որ նրանց մեջ կան լավ լրագրողներ, թեեւ ինքը ստիպված է լինում անբավարար որակի պատճառով մերժել ուղարկվող հոդվածների կեսից ավելին:

Մեր խոսակցությունը շարունակվում է հայկական նոր Մայր տաճարից ոչ հեռու գտնվող «Լավաշ» հայկական ռեստորանում: Տնական տոլմաների ու սպասի տեսականին արժանի է այս բարձրակարգ հաստատության հաճախորդներին: Սակայն ո՛չ վերջիններս, ո՛չ մատուցողները չունեն ակնհայտ հայկական դիմագծեր:

Ռուսաստանի հայկական կառույցների գործունեությունն, անշուշտ, կատարյալ չէ: Հետխորհրդային նոր Ռուսաստանի նմանությամբ՝ հայ համայնքն էլ դեռ չի կարողացել ստեղծել հարատեւ գոյություն երաշխավորող կառույցներ: Համայնքային կառույցներում ներդրումների պակասը թերեւս բացատրվում է Հայաստանի հետ ընտանեկան սերտ կապերով եւ երթուղարձերով: Կամ գուցե բանվորական եւ համեմատաբար քիչ որակավորված ներգաղթերի «տնտեսական» բնույթով: Ինչպես ավելի ուշ համոզվեցի՝ այդ բոլոր գործոններն էլ ինչ-որ դեր խաղացել են:

Գրիգոր Անիսոնյանը ինձ պատմեց այն նորահարուստների մասին, որոնք միշտ չէ, որ գիշատիչ օլիգարխներ են, բայց նրանցից ոմանք անկիրթ մարդիկ են եւ ահավոր քամահրանքով են վերաբերվում հանուրի շահերին: Այդուհանդերձ նա իր խոսքն ավարտեց լավատեսական նոտայով. «Այստեղի հայերի մասին դատեք ոչ թե իրենց ռուսախոսությամբ, այլ նրանով, թե ինչ կարող են կատարել»: Օրինակներն են Մոսկվայի տպավորիչ տաճարը եւ Սիբիրի հայկական եկեղեցիները:

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ

«France-Arménie», juin 2013

Ֆրանս. թարգմ. Պ. Ք.

# Հայկական հնէաբանության կենտրոն Կալիֆոռնիա համալսարանում

**Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի հնէաբանության Կոտսեն ինստիտուտը երկու միլիոն դոլարի նվիրատվություն է ստացել նախկին տան Զարուհի Սառա Չիբճյանից՝ հիմնելու Հայկական հնէաբանության եւ ազգագրության մշտական կենտրոն համալսարանում: «Արմինյըն միրոր-սփեքթեյթըր» շաբաթաթերթի փոխանցմամբ՝ կենտրոնը կրելու է Չիբճյանի ծնողների՝ Համբարձում եւ Օվսաննա Չիբճյանների անունը: Գումարային նվիրատվությանը զուգահեռ՝ Զարուհին պատմական եւ մշակութային գրքերի, փաստաթղթերի եւ արժեքավոր իրերի մի հարուստ հավաքածու է նվիրել ինստիտուտին, որոնք դասակարգվելուց հետո թվայնացվելու են՝ հնարավորություն ընձեռելով գիտաշխատողներին օգտվելու դրանցից ուսումնասիրությունների ժամանակ:**

**Չիբճյան հավաքածուի եւ հետազոտությունների ծրագրի տնօրեն է նշանակվել վերոնշյալ ինստիտուտի փոխտնօրեն Գրիգոր Արեշյանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են դասախոսություններ կազմակերպել, գիտական աշխատանքներ տպագրել, ինչպես նաեւ ուսանողական կոնֆերանսներ անցկացնել հայոց պատմության, հնէաբանության եւ ազգագրության թեմաներով:**

**Զարուհի Չիբճյանը թոշակառու ուսուցչուհի է, մանկական հոգեբանության մասնագետ: 2003-ին հիշողությունների մի գիրք է հրատարակել Եղեռն ապրած իր հոր տարագրության վերաբերյալ: Նա նաեւ ֆինանսավորել է պատմության եւ հնէաբանության հարցերի ուսումնասիրությանը նվիրված «Արամազդ» անգլիալեզու գիտական հանդեսի հրատարակությունը:**

**«Փաստաթղթերի, նամակների եւ իրերի այս հավաքածուն հայկական սփյուռքի ողբերգական, բայց նաեւ հերոսական անցյալը ուսումնասիրելու անգնահատելի հնարավորություն է տալիս: Ավելին, նոր հարցադրումների եւ հետազոտությունների նոր ոլորտների դուռ է բացում: Հուսով ենք՝ նվիրատվությունը ուրիշներին օրինակ կծառայի», ասել է այս առթիվ Կոտսեն ինստիտուտի տնօրեն Չարլզ Ստենիշը»:**

**Հ. Ծ.**



# Նայլ. «Թուրքիան չի կարող պատժել ավստրալացիներին»

**Ավստրալիայից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Սիդնեյում Նոր Հարավային Ուելսի օրենսդիր մարմնի անդամ, պատվելի Ֆրեդ Նայլը վերջերս հարգանքի տուրք է մատուցել ANZAC-ի (ավստրալական եւ նորզելանդական բանակային կորպուսներ) այն զինվորների հիշատակին, որոնք ականատես են եղել Օսմանյան կայսրությունում հայերի, հույների եւ ասորիների դեմ սանձազերծված ցեղասպանություններին եւ օգնություն ցուցաբերել տուժածներին:**

**Հոգեւորական Նայլի այս արարքը հետեւել է այն մեղադրանքներին, որ Ավստրալիայում Թուրքիայի դեսպանը ներկայացրել է, ասելով, թե այդ ստորաբաժանումների զինվորների հաշվետվությունները սխալ են եւ իրականությանը չեն համապատասխանում: Նաեւ այն սպառնալիքներին, որ Թուրքիայի արտգործնախարարն է հնչեցրել, նշելով, որ ավստրալացի այն քաղաքագետները, որոնք պաշտպանում են վերոնշյալ ցեղասպանությունները ճանաչելու առաջարկությունները, չեն կարող մասնակցել 2015-ին նախատեսվող Գալիպոլիի հիշատակությունների շրջանակներում անցկացվող ANZAC-ի օրվան նվիրված արարողություններին:**

**«Այդ իրադարձությունների հարյուրամյակի շեմին բոլորովին բարեկամական արարք չէ հայտարարելը, որ Ավստրալիայի պատմությանն առնչվող առաջարկություններին ու բանաձեւերին թիկունք կանգնող խորհրդարանականների մասնակցությունը 2015 թվի Գալիպոլիի հիշատակություններին ցանկալի չէ», նշել է Նայլը:**

**Գալիպոլիի մարտերից անմիջապես հետո ավստրալացի զինվորներն առնչվել են հայերի, հույների եւ ասորիների ցեղասպանությունների հետ, ու նրանցից ավելի քան 300-ը դարձել են ռազմագերիներ: Նրանք հետագայում այդ վայրագությունների մասին մանրամասն գրել են իրենց օրագրերում եւ հուշերում: Այդ նկարագրություններից շատերն այսօր գտնվում են «Պատերազմի ավստրալական հուշամալիրի» արխիվներում:**

**Օրենսդիր մարմնի առաջ ունեցած իր ելույթի ժամանակ Նայլը կոչ է արել Թուրքիային՝ հարգել Ավստրալիայի պատմությունը եւ ճանաչել Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում մարդկության դեմ կատարված ցեղասպանությունները:**

**«Ժամանակակից Թուրքիան եւ Ավստրալիան պետք է այնպիսի բարեկամություն մշակեն, որը հիմնված լինի հարգանքի եւ պատմական տարբերությունների հիման վրա: Թուրքիան եւ Ավստրալիան միասին են հաղթահարել Գալիպոլիի մարտերի ժառանգությունը, այնպես որ մենք նաեւ պետք է միասին հաղթահարենք գաղափարների տարբերությունը, որ մենք ունենք ասորական, հունական եւ հայկական ցեղասպանությունների ճանաչմանը ուղղված առաջարկությունների վերաբերյալ», ավելացրել է Նայլը:**

**Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Վաչե Ղահրամանյանը ողջունել է Նայլի ելույթը՝ ասելով. «Այդ ժամանակահատվածում մեր պատմությունը միահյուսվել է Ավստրալիայի պատմությանը: Շատ քաջարի ավստրալացի զինվորներ իրենց կյանքի գնով օգնել են մազապուրծ հայերի, հույների եւ ասորիների: Այդ բոլորը փաստերով արձանագրված են եւ պահվում են արխիվներում: Հայերի ցեղասպանությունը ժխտելը նշանակում է նաեւ ժխտել Ավստրալիայի պատմությունը»:**

**Նայլի ելույթից պաշտոնական Անկարան մնացել է անդրդվելի: Դարձյալ հնչել են նույն ձեւակերպումները, որ ցեղասպանությունների նման բանաձեւերին աջակցող քաղաքական գործիչները կզրկվեն Թուրքիայի բարեկամական եւ սիրալիր վերաբերմունքից:**

**Հ. Ծ.**

## 75-ամյակ

# Արամ Շահինյան

Լրանում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, ֆիզ-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտական մտավորականության ճանաչված ներկայացուցիչ **Արամ Արտաշեսի Շահինյանի** ծննդյան 75-ամյակը:

Ավարտելով Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, այնուհետեւ ԽՍՀՄ ԳԱ-ի ակադեմիկոս Ն. Ն. Սեմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, աշակերտելով մեծանուն քիմիկոս, ակադեմիկոս Ն. Ս. Ենիկոլոպովին՝ նա ձեւավորվեց որպես լայն հետաքրքրությունների տեր գիտնական, որը հետագայում իր գիտելիքներն ու փորձը ներդրեց Հայաստանում գիտական նոր ուղղությունների ստեղծման եւ զարգացման գործում: Աշխատելով մասնագիտությունների հանգուցակետում՝ նա մեծ ներդրում ունեցավ ֆիզիկայի, քիմիայի եւ կենսաբանության հարակից մի շարք կարեւոր պրոբլեմների լուծման մեջ, որոնցում նա սկզբնավորել եւ զարգացրել է գիտական նոր ուղղություններ:

Պոլիմերման պրոցեսների կինետիկայի բնագավառում Ա. Շահինյանը իր ավանդն ունեցավ իոնական հետերոշղթայական պոլիմերների առաջացման մեխանիզմների եւ հատկությունների փոխադարձ կապի տեսության ստեղծման մեջ: Նրա աշխատանքներում, որոնք կատարվել են պրոֆ. Վ. Վ. Իվանովի հետ համատեղ, բացահայտվել է խզման միջոցով շղթայի փոխանցման նոր տարրական ռեակցիայի պայմաններում առաջացող պոլիմերի մոլեկուլազանգվածային բաշխման տեսությունը: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ալ. Ալ. Բեռլինի բնորոշմամբ, այս բնագավառում «Ա. Ա. Շահինյանի ստացած արդյունքները դարձան դասական եւ օգնեցին ստեղծել պոլիացետալների արդյունաբերական արտադրություն»:

Այս աշխատանքները ամփոփվեցին եւ Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում պաշտպանվեցին թեկնածուական ատենախոսության ձեւով:

Միցելների ջրային լուծույթների ֆիզիկական քիմիայի եւ էմուլսիոն պոլիմերացման բնագավառում Ա. Շահինյանը (պրոֆ. Լ. Մելքոնյանի մասնակցությամբ) մշակել է էմուլսիոն պոլիմերների ստացման մեխանիզմի եւ հատկությունների վրա համակարգի դինամիկ կառուցվածքի ազդեցության տեսությունը: Ցույց է տրվել, որ էմուլսիոն պոլիմերման ընթացքում կարելի է հասնել սինթեզվող պոլիմերների ցանկալի հատկությունների՝ ազդելով համակարգի կառուցվածքի վրա: Այդ աշխատանքները ամփոփվել են Ա. Շահինյանի «Իոնական միցելների կառուցվածքների դերը էմուլսիայում մակրոմոլեկուլների ձեւավորման մեխանիզմներում» գրքում (1985թ.): Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Սինթետիկ պոլիմերային նյութերի» ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ն. Ս. Ենիկոլոպովի բնութագրմամբ՝ «Ա. Ա. Շահինյանի առաջարկած պատկերացումները մակերեւութային ակտիվ միացությունների լուծույթների վերաբերյալ թույլ են տալիս զարգացնել մի նոր գիտական ուղղություն, որը ներառում է ոչ միայն պոլիմերման պրոցեսները, այլեւ միցելային կատալիզը, հեղուկ բյուրեղները եւ այլն»:

Այս արդյունքները ամփոփվել են Ա. Շահինյանի կողմից ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում պաշտպանված քիմ. գիտ. դոկտորի եւ 5 թեկնածուական ատենախոսություններում:

Լիոտրոպ հեղուկ բյուրեղների քիմիայի եւ ֆիզիկայի ասպարեզում Ա. Շահինյանը առաջիններից մեկն էր, որ նախկին ԽՍՀՄ-ում սկսեց հիմնարար հետազոտություններ կատարել բնության մեջ լայն տարածում ունեցող լիոտրոպ հեղուկ բյուրեղների բնագավառում: Այդ համակարգերի կառուցվածքային նմանությունները միցելների եւ բջջային թաղանթների հետ թույլ տվեցին, որ Ա. Շահինյանի կողմից միցելային համակարգերի համար առաջարկված պատկերացումները եւ մոտեցումները օգտագործվեն նաեւ լիոտրոպ հեղուկ բյուրեղների ուսումնասիրության մեջ: Ցույց է տրվել, որ լիոտրոպ հեղուկ բյուրեղների մոլեկուլային եւ վերմոլեկուլային կառուցվածքների միջեւ գոյություն ունի որոշակի կորելյացիա, որը մեծ հնարավորություններ է ստեղծում լիոտրոպ հեղուկ բյուրեղների կիրառության նոր ոլորտներ բացահայտելու համար: Առաջին անգամ այս համակարգերը առաջարկվեցին որպես ճնշման չափիչ սարքերի զգայուն տարրեր: Ստեղծվեցին սարքեր, որոնք կյանքի կոչվեցին եւ ցուցադրվեցին Լայպցիգի միջազգային տոնա-



վաճառում: Ճանաչված գիտնական, Ռուսաստանի ԳԱ «Կրիստալոգրաֆիայի» ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Բ. Կ. Վայնշտեյնի գնահատմամբ՝ «Ա. Ա. Շահինյանի կողմից ստեղծվել է լիոտրոպ հեղուկ բյուրեղների հիմնական կառուցվածքային միավորներում տեղի ունեցող կառուցվածքային ձեւափոխումների վերաբերյալ տեսություն եւ նրան կարելի է համարել Հայաստանում լիոտրոպ հեղուկ բյուրեղների քիմիայի եւ ֆիզիկայի գիտական ուղղության հիմնադիր»:

Այս բնագավառում ստացված արդյունքները ամփոփվեցին Ա. Շահինյանի կողմից ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում պաշտպանված ֆիզ.մաթ.գիտ. դոկտորի ատենախոսությունում, հետագայում եւս 2 դոկտորական, ինչպես նաեւ 5 թեկնածուական ատենախոսություններում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հաշվողական ռեսուրսների թափ առնող զարգացումը եւ դրանց կիրառության հնարավորությունները տարբեր ոլորտներում, 1990-ական թվականի վերջերից գիտության եւ գիտելիքահենք տեխնոլոգիաների բնագավառում բերեցին որակապես մի նոր իրավիճակի, որը հիմք հանդիսացավ արձանագրելու, որ ոտք ենք դնում «21-րդ դարի գիտության» դարաշրջան: Բնական գիտությունների մասով այս նոր ուղղությամբ իր ծանրակշիռ մասնակցությունն է բերում նաեւ Ա. Շահինյանի ղեկավարած գիտական անձնակազմը:

Համակարգչային քիմիա եւ կենսաբանություն ուղղությունը Հայաստանում դեռեւս 2000 թվականից ակտիվորեն զարգանում է Ա. Շահինյանի ղեկավարությամբ: Առաջին անգամ Հայաստանում հիմնադրվել են մոլեկուլային դինամիկայի եւ համակարգչային թաղանթաբանություն գիտական ուղղությունները՝ ընդգրկելով ֆոսֆոլիպիդային թաղանթների, միցելային լուծույթների եւ լիոտրոպ հեղուկ բյուրեղների հետազոտության ոլորտները: Հաշվողական ռեսուրսների օգտագործման շնորհիվ ստացվել են նորագույն գիտական արդյունքներ, որոնք հրատարակվել են աշխարհի բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում եւ մեծ հեղինակություն են վայելում: Ամերիկյան BioMedLab հետազոտությունների վարկանիշը գնահատող կազմակերպությունը Ա. Շահինյանի եւ նրա աշակերտների այս բնագավառ կատարած աշխատանքները դասել է նույն ոլորտի լավագույն աշխատանքների շարքին: Ստացված արդյունքները ամփոփվել են 5 թեկնածուական ատենախոսություններում:

Ներկայումս Ա. Շահինյանի ղեկավարությամբ գործող գիտական անձնակազմը իրականացնում է բնական գիտություններում բարձր արտադրողական հաշվողական ռեսուրսների օգտագործմամբ կատարվող աշխատանքներ՝ օգտվելով ինչպես «Հայ Գրիդի», այնպես էլ մի շարք այլ երկրներում գտնվող գերհամակարգիչների հնարավորություններից: Այս բնագավառում ձեռք բերված կարեւոր արդյունքների համար Ա. Շահինյանը իր աշակերտի հետ 2008թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի:

Ա. Շահինյանի կողմից, ինչպես նաեւ իր գիտական ղեկավարությամբ եւ խորհրդատվությամբ պաշտպանվել են 4 դոկտորական եւ 16 թեկնածուական ատենախոսություններ:

Ա. Շահինյանը շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է: Նա հեղինակ է նաեւ 3 մենագրության, ինչպես նաեւ երեք գրքերի առանձին գլուխների, որոնք լույս են տեսել Nova Science Publishers, Inc.(ԱՄՆ) հրատարակչության կողմից:

Իր գիտական վաստակի համար Ա. Շահինյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից (2000 թ.), այնուհետեւ՝ իսկական անդամ (2010 թ.): 2009 թ. նա արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման:

Ա. Շահինյանը մեծ դեր է կատարել նաեւ գիտության ոլորտը համակարգող օրենսդրական դաշտի ձեւավորման գործում: 1992-1999 թթ., լինելով ՀՀ գիտության եւ բարձրագույն կրթության (ապա՝ գիտության եւ կրթության) փոխնախարար, իսկ այնուհետեւ 1999-2011 թթ. ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ բնական, ապա քիմիական եւ երկրի մասին գիտությունների բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, նա կարեւոր դերակատարում է ունեցել «ՀՀ գիտության եւ գիտատեխնիկական գործունեության մասին» եւ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքների ստեղծման մեջ, որոնք թույլ են տվել սահմանել անկախ Հայաստանում գիտական կազմակերպությունների, այդ թվում եւ ՀՀ ԳԱԱ իրավական կարգավիճակը եւ գործունեության առանձնահատկությունները:

Ա. Շահինյանը զգալի ավանդ է ունեցել նաեւ գիտության բնագավառում միջպետական համագործակցության կայացման գործում: 1996-2007 թթ. նա եղել է Եվրոպական INTAS կազմակերպության գործունեության համակարգողը Հայաստանում, 1996-1997 թթ. եղել է «Հայ-ռուսական (Սլավոնական)» համալսարանի ստեղծման համատեղ հանձնաժողովի համանախագահ, եղել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) համակարգող խորհրդի անդամ եւ այլն:

Այժմ Ա. Շահինյանը իր գիտական գործունեությունն իրականացնում է ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում, իր ստեղծած «Կենսաինֆորմատիկայի» լաբորատորիայում: Նա ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետում դասավանդում է կենսաինֆորմատիկա առարկան: Ա. Շահինյանը Հայաստանում առաջին էլեկտրոնային գիտական ամսագրի՝ «Բնական գիտություններ»-ի գլխավոր խմբագիրն է:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, քիմիական եւ Երկրի մասին գիտությունների բաժանմունքը եւ հանրապետության ողջ գիտական հասարակությունը սրտանց եւ ջերմորեն շնորհավորում են Արամ Արտաշեսի Շահինյանին հոբելյանի առիթով՝ ցանկանալով նրան քաջառողջություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

**Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ նախագահ,**
**ակադեմիկոս**
**Լ. Ա. ԹԱՎԱԴՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ քիմիական եւ**
**Երկրի մասին**
**գիտությունների բաժանմունքի**
**ակադեմիկոս-քարտուղար**

ՀԱՅԱՍՏԱՆ

# Հայտնաբերվել են դինոզավրի ու թռչող մողեսի ոսկորներ

Հայաստանի Հանրապետության ու Արցախի տարածքում ծովային ողնաշարավորներն ավելի տարածված են եղել, քան ցամաքայինները, քանի որ շատ վաղ անցյալում այս տարածքների մեծ մասը ծածկված է եղել ծովերով: Հետեւաբար ծովային ողնաշարավորների մնացորդներ հայտնաբերվել են ավելի շատ: Այս մասին լրագրողներին երեկ ասուլիսի ժամանակ տեղեկացրեց Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանության ինստիտուտի գիտաշխատող, երկրաբանական գիտությունների թեկնածու **Հայկ Մելիք-Ադամյանը**: Ըստ նրա՝ մինչ վերջերս կարծիք էր տարածված, թե Հայաստանում դինոզավրեր չեն եղել, սակայն իրականում եղել են, եւ դա փաստում է Սանկտ Պետերբուրգից մի հնէաբանի հայտնաբերած դինոզավրի ոսկորը, որը նա հայտնաբերել է Սեւանի լեռնաշղթայի տարածքում: Դինոզավրի այս ոսկորի մասին, Հայկ Մելիք-Ադամյանի փոխանցմամբ, նաեւ հրապարակում է եղել: Սկզբում եղել են կասկածներ, թե դա թռչող մողեսի ոսկոր է, սակայն հետո ապացուցվեց, որ դինոզավրի ոսկոր է: Դինոզավրի տեսակը, սակայն, հնարավոր չի եղել որոշել: Բարձրությունը ենթադրվում է՝ եղել է 1,5-2 մետր: Դինոզավրի մնացորդներ հայտնաբերվել են նաեւ Վրաստանի տարածքում:

Հայկ Մելիք-Ադամյանն ավելի սենսացիոն է համարում իրականում թռչող մողեսի ոսկորի հայտնաբերումը 1980-ականների կեսերին Վայքի շրջանում: Սա հայտնաբերել է Սանկտ Պետերբուրգում ապրող հայտնի հնէաբան Աթարբեկյանը: Այս մասին ռուսական մամուլում եղել է հրապարակում, սակայն բավականին ուշացումով՝ 2005 թվին:

Հայկ Մելիք-Ադամյանի փոխանցմամբ՝ թռչող մողեսն ապրել է շուրջ 90 միլիոն տարի առաջ, եւ դրա չափերը բավականին մեծ են եղել, այնքան, որ կարելի է համեմատել սպորտային ինքնաթիռի հետ: Քաշը եղել է շուրջ 40 կիլոգրամ, իսկ թեւերի բացվածքը՝ շուրջ 8 մետր: Ըստ բանախոսի՝ սա, սակայն, աշխարհում հայտնաբերված ամենամեծ թռչող մեղեսը չէ. Հարավային Ամերիկայի տարածքում հայտնաբերվել են թռչող մողեսներ, որոնց թեւերի բացվածքը հասել է մինչեւ 12 մետրի:

Հայաստանում հայտնաբերված թռչող մողեսի ու դինոզավրի ոսկորները հիմա պահվում են Սանկտ Պետերբուրգի Կենտրոնական երկրաբանական թանգարանում: Նմուշներն այնտեղ են, քանի որ այնտեղ է ապրում հնէաբան Աթարբեկյանը, հայտնաբերելուց հետո նա դրանց տարել է իր հետ: Բացի դրանից, ըստ Հայկ Մելիք-Ադամյանի, Հայաստանում դինոզավրի մասնագետ չունենք:

Եթե ունենանք բավարար մասնագետներ ու ֆինանսավորում, ապա այստեղ հնէաբանությունը նույնպես կզարգանա ավելի արագ, քանի որ դրա համար Հայաստանի ու Արցախի ընդերքը, որը լի է անակնկալներով, նախադրյալներ տալիս է:

Երկրաբան Մելիք-Ադամյանն ասում է, որ Հայաստանի ու Արցախի տարածքում ապրել են նաեւ հսկա կաթնասուններ. «Օրինակ՝ անձամբ ես փղի մի ատամ եմ գտել»: Իսկ 1970-ականների կեսերին Լերմոնտովո գյուղի շրջակայքում գտնվել է բրդոտ մամոնտի կմախք:

**Ի. Պ.**

**Սրբագրում եւ խմբագրում**
ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի,
նաեւ մուտքագրում
*(094 48-68-03)*

Ստամբուլի Թաքսիմ հրապարակի «Գեզի» զբոսայգում բռնկված, ապա երկրով մեկ տարածված անկարգությունները դեռեւս շարունակվում են Թուրքիայում: Չեն դադարում նաեւ ցուցարարների բախումները ոստիկանության հետ: Այս անկարգությունները թերեւս կարելի էր ընդվզում կամ դիմադրություն անվանել, բայց ոչ՝ համաժողովրդական:

Համաժողովրդականի կոչմանն արժանանալու համար ընդվզումը կամ դիմադրությունը պետք է հետամուտ լինի հասարակության բոլոր խավերին, երկրի էթնիկ եւ կրոնական խմբավորումների, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների ազատություններին: Մինչդեռ անկարգություններով քեմալականությունը փորձում է ռեւանշ վերցնել իսլամականներից:

Ինչպես հայտնի է, 2002-ից երկրում միանձնյա իշխող վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը զգալի սահմանափակել է բյուրոկրատիայի միջոցով Թուրքիան հետնաբեմից մշտապես կառավարող քեմալականների եւ քեմալականներին վերահսկող առանձնաշնորհյալ խավի արտոնությունների ու գործունեության ոլորտը:

«Սպիտակ թուրք» կոչված այս խավի ներկայացուցիչները, որոնք քաղաքական լծակներից զատ, իրենց ձեռքն էին վերցրել Թուրքիայի ֆինանսատնտեսական լծակները, ներթափանցելով ընդհուպ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբ, որպես կանոն, սաբաթայական, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերեւույթ իսլամ ընդունած հրեաներ են: Ահա թե ինչու «Գեզի» այգու ցույցերին կայծակնային արագությամբ արձագանքում էին պաշտոնական Վաշինգտոնը, Բեռլինը, Փարիզը, ՄԱԿ-ը, Եվրոմիությունը, Եվրոխորհրդարանը, իսկ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները ուղիղ եթերում արված ութժամյա հեռարձակումներով միջազգային հնչեղություն էին հաղորդում դրանց եւ խիստ դատապարտում միջազգայնորեն թուրք ոստիկանության բռնությունները:

Հանուն ժողովրդավարության եւ հանդուրժողականության թուրք ոստիկանների բռնությունը խստագույնս դատապարտող արեւմտյան տերություններն ու անաչառության ջղաձգումներ անցկացնող աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները սակայն լայնախոհ հանդուրժողականություն էին դրսեւորել, երբ չէին բացահայտվում Հրանտ Դինքի սպանության բուն կազմակերպիչները, խոր լռությամբ հետեւել էին, երբ ապրիլի 24-ի օրը բանակում սպանվում էր ժամկետային զինծառայող Սեւակ Շահինը, ողջամտորեն շրջանցել էին, երբ 2012-ի փետրվարի 26-ին նույն Թաքսիմում հարյուրհազարանոց ոհմակը «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» կարգախոսով բռնություն քարոզելուց զատ բռնության թիրախ էր դարձնում թուրքահայությանը եւ մոռացության էին տվել Սամաթիայի դեպքերը, որոնց հետեւանքով թուրք խուժանը կոկորդը դանակով կտրելու միջոցով սպանել էր տարեց հայ կանանցից երկուսին, երկուսը կորցրել էր աչքը, ավելին, հարկ չէին համարել դատապարտելու սպանության, խոշտանգման եւ բռնության այս դեպքերի 2 ամիս ուշացումով, այն էլ Մարդու իրավունքների միության հակազդեցությունից հետո արձագանքող թուրքական ոստիկանությանը:

Եթե Թուրքիայում հայերը վերստին թիրախ դառնան, ապա միջազգային այդ նույն արձագանքին են արժանանալու: Նրանց թիրախ դարձնելու փորձեր արդեն արվում են հենց «Գեզի» զբոսայգում: Ընդ որում անողների թվում են ինչպես ցույցերի կազմակերպիչները, այնպես էլ հակառակորդները: Օրինակ, Ստամբուլի համալսարանի պրոֆ. Ահմեդ Թանը հայտարարել է. «Ընբռնումով եմ մոտենում ձեր ակտիվ մասնակցությանը «Գեզիի» ցույցերին, եթե դու հրեա եք, հայ կամ հույն: Պարզապես խնդրում եմ, որ ուսումնասիրեք ձեր ցեղը»: Օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, ըմբշամարտիկ Ռիզա Քայաալփն էլ համացանցում ամենաայլանդակ, փողոցային հայհոյանքներ է հասցեագրել «Գեզիի» ցույցերի պահպանմանը, կործանիչ քայլերի տեղիք են տալիս: Հետաքրքրական է Թուրքիայի եւ արտերկրի հայերի շահագրգռությունը ցույցերով: Ավելի քան հետաքրքրական է այն, որ Թուրքիայում հայերին հարող լրատվամիջոցները անընդհատ մատնացույց են անում «Գեզի» զբոսայգու նախկինում «հին հայկական գերեզմանոց» լինելու հանգամանքը: Սրանց ուզածը զբոսայգու պահպանումը չէ, այլ «հայկական գերեզմանոցի» վերադարձը հայերին»:

Հատկանշական է, որ թուրքահայ որոշ շրջանակներ աջակցում են ցուցարարներին, մոռանալով իսլամականության դեմ ռեւանշի ձգտող քեմալականների հայերի համար աղետաբեր գործունեության եւ թուրք հրոսակի ագրեսիվ նկրտումները ընդդեմ հայերի ուղղելու նպատակամղվածության մասին: Արտերկրում գործող քրդական, ասորական եւ այլ կազմակերպություններն էլ ցույցերը նույնացնում են Թուրքիայի ժողովուրդների ազատության պայքարի, ցուցարարներին՝ ազատագրության զինվորների հետ: Ավելին, նրանք դեռ անզգուշորեն կոչ են անում, որ «Գեզին» վերանվանվի «Հրանտ Դինքի» զբոսայգի, վերականգնվի այնտեղ դեռեւս 1919-ին տեղադրված Մեծ եղեռնի առաջին հուշարձանը եւ Թաքսիմից դեպի «Ակօս» տանող պողոտան կոչվի Դինքի անունով:

Այս ամենը ցանկատեսություն է: Չի իրականանա: Բայց որ հավասարապես կգրգռեն քեմալական ցուցարարներին ու սրանց ոխերիմ հակառակորդներ իսլամականներին թուրքահայության դեմ՝ ակնհայտ է:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# «Գեզիի» ցույցերը ժողովուրդների ազատության պայքա՞րն են Թուրքիայում

## Թե՞ դրանք արտահայտում են իսլամականներից ռեւանշ վերցնելու քեմալականության ձգտումը



# Բեռլուսկոնին իր նկատմամբ կայացված դատավճիռը համարում է քաղաքական



Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին հայտարարել է, որ նախօրեին Միլանի դատարանում իր նկատմամբ դատավճիռ է կայացվել քաղաքական դրդապատճառներով: Հունիսի 24-ին դատարանը նախկին վարչապետին մեղավոր է ճանաչել անչափահասի հետ սեռական կապ ունենալու եւ պաշտոնեական դիրքը չարաշահելու մեջ, նրան դատապարտելով 7 տարվա բանտարկության:

Բեռլուսկոնին ազատության մեջ կմնա մինչեւ գանգատարկման դատավարության ավարտը, որը կարող է տեւել մի քանի տարի: Կայացված դատավճիռը կարող է Իտալիայում կոալիցիոն նոր ճգնաժամ առաջացնել, նշում է Euronews հեռուստաալիքը:

Մեղադրյալի շահերը պաշտպանող փաստաբան Նիկկոլո Գեդինին կարծում է, որ պետք է խոսել նույնիսկ ոչ թե դատավճռի քաղաքական ենթատեքստի մասին, այլ որ դատավճիռը «իրականության հետ որեւէ ընդհանուր բան չունի եւ կապված չէ քննության ընթացքում ներկայացված ապացույցների հետ»:

Միլանի դատարանը ապացուցված է համարել Սիլվիո Բեռլուսկոնիի եւ պարուհի Քարիմա Մախրուգի (Ռուբի) ինտիմ կապը վերջինիս 17-ամյա հասակում, թեեւ տվյալ փաստը ժխտել էին թե՛ ամբաստանյալը եւ թե՛ իբրեւ վկա հանդես եկած Քարիման: Վկան չէր ժխտել Բեռլուսկոնիի հետ ծանոթ լինելու եւ նրա հովանավորությունը վայելելու փաստը: Ի դեպ, իտալական մամուլում Ռուբիին անվանում են «Մուբարաքի զարմուհի»:

Բեռլուսկոնին պնդում է, որ իրավաբանական հետապնդումը եւ քաղաքականապես պատճառաբանված դատավճիռը կապված են Իտալիայի դատական համակարգն արմատապես բարեփոխելու իր ձգտման հետ:

# Քաբուլում հարձակվել են նախագահական պալատի եւ ԿՀՎ շտաբի վրա



Աֆղանստանի անվտանգության ծառայությունների հայտարարության համաձայն, հունիսի 25-ի առավոտյան Քաբուլի կենտրոնում՝ նախագահական պալատի շրջանում, թալիբները ձեռնարկել են զինված հարձակում, որը ձախողվել է: Բոլոր գրոհայինները ոչնչացվել են:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ առավոտյան Քաբուլում որոտացել են պայթյուններ, ապա նախագահական պալատի շրջանում ծավալվել է ուժեղ փոխհրաձգություն: Գրոհայինների դեմ դուրս էին եկել ոչ միայն նախագահական պալատի պահապանները, այլեւ մոտակայքում գտնվող պաշտպանության նախարարության եւ ԿՀՎ շտաբի պահակախմբերը:

«Թալիբան» շարժման ղեկավարությունը ստանձնել է հարձակման պատասխանատվությունը:

Քաբուլի ոստիկանապետ, գեներալ Այուբ Սալանգիի խոսքերով, բոլոր հարձակվողները ոչնչացվել են: Մարտի ընթացքում սպանվել են 5 թալիբ եւ 2 աֆղան զինծառայող: Սակայն զոհերի եւ տուժածների թիվը կարող է աճել, քանի որ նախագահական պալատի շրջանում խաչաձեւ կրակի տակ էին հայտնվել մի խումբ դպրոցականներ:

Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը հարձակման ժամանակ եղել է պալատում. նա պետք է հանդիպեր լրագրողների հետ: Քաբուլում որոշ աղբյուրներ վկայակոչելով՝ BBC-ն հաղորդում է, որ թալիբ գրոհայինների թիրախը եղել է ոչ թե նախագահական պալատը, այլ՝ «Արիանա» հյուրանոցում գտնվող ԿՀՎ շտաբը:

Անցյալ շաբաթ Կարզայը մերժել էր հաշտության բանակցություններ սկսելու «Թալիբանի» առաջարկությունը, թեեւ ԱՄՆ-ը հանդես էր եկել բանակցությունների օգտին: Կարզայը նաեւ ընդհատել էր Վաշինգտոնի հետ վարվող բանակցությունները Աֆղանստանում 2014-ից հետո ամերիկյան զորքերի մնալ-չմնալու հարցի առնչությամբ:

Հունիսի 18-ին «Թալիբան» շարժումը Քաթարի մայրաքաղաք Դոհայում բացել էր պաշտոնական ներկայացուցչություն եւ Արեւմուտքի երկրների հետ բանակցելու պատրաստակամություն էր հայտնել: ԱՄՆ-ը ողջունել էր այդ նախաձեռնությունը՝ ասելով, թե համաձայն է երկխոսություն սկսել թալիբների հետ: Թալիբների ներկայացուցչությունը կոչվում է «Աֆղանստանի իսլամական էմիրության քաղաքական գրասենյակ»:

Պ. Ք.

# Բրազիլիայի նախագահը խոստացավ նոր բարեփոխումներ

Բրազիլիայի բազմաթիվ քաղաքներում սոցիալական պահանջներով անցկացվող ցույցերի պայմաններում երկրի նախագահ Դիլմա Ռուսեֆը առաջարկել է 23 մլրդ դոլար հատկացնել հասարակական տրանսպորտին: Այդ մասին նա հայտարարել է բողոքի ցույցերի կազմակերպիչների հետ կայացած հանդիպումից հետո: Ֆրանսպրես գործակալության տվյալներով, նախագահը նաեւ առաջարկել է հանրաքվե անցկացնել քաղաքական բարեփոխման հարցի առնչությամբ:

Ենթադրվում է, որ միջոցները կներդրվեն քաղաքների հասարակական տրանսպորտի զարգացման նախագծերում: Հենց այդ տրանսպորտի աշխատանքի դժգոհությունն է պատճառը, որ հունիսի կեսերից Բրազիլիայում տեղի են ունենում հակակառավարական ցույցեր:



Բողոքավորների ներկայացուցիչները ընդգծում են, որ երկրի նախագահը չի նշել սեփական խոստումների կատարման կոնկրետ ժամկետներ: Ցույցերի կազմակերպիչները հայտարարել են, որ մտադիր են շարունակել բողոքի ելույթները, մինչեւ որ իշխանությունները հասարակական տրանսպորտով անվճար երթեւեկելու կարգ սահմանեն:

Ավելի վաղ՝ հունիսի 22-ին, ձեռնարկումների կազմակերպիչները արդեն հրաժարվել էին դադարեցնել ցույցերը՝ չնայած հասարակական տրանսպորտի զարգացման ծրագիր պատրաստելու եւ կրթության ու առողջապահության զարգացմանն ուղղված բարեփոխումներ անցկացնելու նախագահի խոստումներին:

ԱՅՍՕՐ

# Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոն




ՖՈՏՈԼՈՒՐ

Հունիսի 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կմեկնարկի հայ հայտնի երաժիշտներ Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնը, որն այս տարի նվիրված է Արամ Խաչատրյանի 110-ամյա հոբելյանին: Փառատոնի հատուկ հյուրերն են ԱՄՆ-ից ժամանած Վադիմ Լանդոն (կլառնետ) եւ 10-ամյա դաշնակահար Մաքսիմ Լանդոն:

Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա փառատոնը նպատակ ունի ինքնադրսեւորման հնարավորություն ընձեռել շնորհալի երիտասարդ կատարողներին, տարածել հայկական ժամանակակից երաժշտությունը, ընդլայնել ստեղծագործական շփման դաշտը հայաստանաբնակ, սփյուռքահայ եւ այլազգի երաժիշտների միջեւ, հատուկ կրթական ծրագրերի միջոցով նպաստել մանուկ եւ պատանի կատարողների ունակությունների զարգացմանը, մարզային երաժշտական օջախների համար մշակել եւ իրականացնել ծրագրեր:

Փառատոնի շրջանակներում տեղի կունենան Տիգրան Մանսուրյանի հեղինակային երեկոն, Հայկ Բոյաջյանի 75-ամյակին նվիրված համերգ, ինչպես նաեւ հունիսի 26-ից հուլիսի 23-ը նախատեսվում է համերգային ծրագրերի շարք, որը կմեկնարկի «Արս լունգա» դուետի նոր նախագծի՝ «Հայ կամերային երաժշտության անթոլոգիա»-ի առաջին մասին ձայնասկավառակների շնորհանդեսով, որը կկայանա այսօր, հունիսի 26-ին, ժամը 19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Ի դեպ, «Հայ կամերային երաժշտության անթոլոգիա» ծրագիրը հայ երաժշտության պատմության մեջ իր ձեւով եւ բովանդակությամբ միակն է, որի շրջանակում հավաքվել է 20-21-րդ դարերի 60 հայ կոմպոզիտորների թավջութակի եւ դաշնամուրի համար գրած ստեղծագործություններ, կատարել եւ ձայնագրել է դրանք ժամանակակից տեխնիկայի վերջին պահանջներին համապատասխան: Արդյունքում թողարկվել են ձայնագրությունների ժողովածուներ՝ ամփոփելով 12 ձայնասկավառակ: Ի դեպ, 2008 թվականին Արամ Թալալյանի գեղարվեստական ղեկավարմամբ հիմնադրվեց փառատոնը՝ որպես թավջութակային երաժշտության փառատոն, իսկ արդեն 2010 թվականից ընդլայնվել է եւ դարձել ալտի եւ թավջութակի փառատոն: Հետագայում համերգային ծրագրերում ընդգրկվել են ինչպես մենակատարներ, փոքր խմբեր, այնպես էլ բազմանդամ նվագախմբեր:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Հետադարձ հայացք Համազգայինի դաստիարակչական ժողովին ու համախմբմանը

Անցած ամիս Ուոթըրթաունում կայացավ Համազգայինի ԱՄՆ-ի Արեւելյան շրջանի 37-րդ դաստիարակչական ժողովը: Նախորդող ժողովներին մասնակցել եմ ... տասնամյակներով, բայց այս մեկը երկար մտածել տվեց: Գուցե որովհետեւ այդ փաստը ինձ համար դեռ պարունակում է Մինաս Թոլոյանի շունչը՝ տարիներին խմահող ու երբեք չխամրող «ներկայությունը»: Գուցե Գոհար Թոլոյանի մի՞շտ հմայիչ ոգի՞ն մղեց մտածելու: Գուցե եւ սիրելի, հղկված, բովանդակալից Թաթուլ Սոնենց-Փափազյանի հայտնվե՞լն էր դադարի ընթացքում: Խմբագիր Զավեն Թորիկյանի հետ ցավալիորեն կարճատեւ, բայց արվեստով կայծկլտող զրո՞ւյցը: Ի վերջո, գուցե պարզապես մտածելու ժամանակ ունեցա տուն վերադառնալու երկար ճանապարհին: Մի խոսքով, մտահանգումս այն էր, որ այս ժողովը դրականորեն տարբերվեց նախորդների երկար շարանից:

Շարանի մեջ եղել է, որ զարմացել, զայրացել, ձանձրացել եմ: Ավելի հաճախ՝ տխրել եմ, տեսնելով, որ կյանքից հեռացել են մեր փայլուն ընկեր-ընկերուհիներից շատերը, իրենց հետ տանելով վառ անհատականություններ հետ շփվելու ուրախությունս: Ու եղել է, որ լուրջ ու իմաստալից մտքերի կողքին ծիծաղս հազիվ եմ զսպել, լսելով ճամարտակություններ, ճոռո՞մ մենախոսություններ, հագեցած հռետորական հարցումներով ու նաեւ պարզապես շաղակրատանք: Բայց այս ժողովը սիրելի դարձավ հենց նրանով, որ ներկաները մտքեր էին հայտնում, ուղիներ որոնում, համարձակ ծրագրեր առաջարկում՝ պարզ ու մեկին, առանց ճարճատուն ճառերի, թեկուզ եւ երբեմն կաղացող հայերենով: Ճիշտն ասած, ինձ համար ոգեւորիչ էին Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ ստեղծվող էլեկտրոնային կապը, Արեւմտյան Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանների նկարագրությունն ու զետեղումը համացանցում, պատանիների համար նախատեսված հայագիտական նյութերով խաղ-մրցույթը: Մ՜ի քեզ բան ... Հրաշալի է, որ շրջանավարտ շրջանային վարչությունը իր գործունեության կողքին հասցրել է նաեւ վերոհիշյալ ու դեռ մի քանի այլ ծրագրերի հիմքը դնել: Է՜լ ավելի հրաշալի է, որ պատկառելի տարիքի հասած մեր միությունը այսպես երիտասարդանում է, համարձակորեն ու համընթաց քայլելով 21-րդ դարի պայմաններին, էլեկտրոնային միջոցները ծառայեցնելով իր բուն նպատակին՝ հայ մշակույթի տարածմանն ու պահպանմանը: Ժողովից արդեն իսկ գոհ վերադարձա հյուրանոց, բայց առջեւում դեռ համերգի վայելքն էր:

Փոխանակ վերջում հետգրության պես (չգիտեմ էլ թե ինչո՞ւ է այդպես ընդունված), այստե՛ղ կուզենայի շնորհակալություն հայտնել կազմակերպիչ հանձնախմբին ու շրջանավարտ շրջանային վարչության անդամներին այս երկօրյա բազմաբնույթ ձեռնարկները կատարելապես կազմակերպելու համար: Պատկերացնում եմ, թե ինչքա՞ն աշխատանք է տարվել համադրելու համար ուրբաթ օրվա հավաքույթը, ժողովի ընթացքը, շաբաթ օրվա համար սրահի նախապատրաստումն ու նրբաճաշակ զարդարանքը, բազմակողմանի հայտագրի ընթացքը, համերգային մասի ծրագրումը եւ ի վերջո հյուրասիրությունը:

Ճիշտ էր ու տեղին, որ «Մայիսյան վոկալ եռյակի» մեծատաղանդ երգչուհիները ուրբաթ երեկոյան ներկա էին համախմբման բացմանը, առիթ ընձայելով ներկաներին շփվել հայրենի արվեստագիտուհիների հետ, վաստակված մեծարանքի խոսքեր ասել նրանց: Տարբեր տարիների հյուրընկալ օջախում էր, որ նույն ազգի ու նույն մշակույթի հավատավորները մեկտեղվեցին: Ի վերջո, «Մայիսյան եռյակի» երգչուհիները՝ իրենց փայլուն տաղանդով, մեր միութենականները՝ իրենց ջանքերով ծառայում են նույն նպատակին, այն է՝ ամենուր վառ պահել հայ արվեստը ու այն հասցնել ժողովրդին: Դարձյալ շնորհավորում եմ նրանց, ովքեր հետեւողականորեն պատրաստել էին մրցանակների տվչության կարգը, ընտրել թեկնածուների մեջ լավագույններին, հրավիրել հոգով ու արվեստով լիարժեք ՀԱՅ Էրիք Նազարյանին եւ մասնավորաբար «Մայիսյան» վոկալ եռյակին:

Դե, հայ չենք լինի, եթե դժգոհություն չհայտնենք (կարծեմ, սա ինքնահաստատման դրսեւորում է դարձել), երբեմն նույնիսկ հանուն այդ «ինքնահաստատման» ոմանք պատրաստ են ծուռ հայելու մեջ արտացոլված նկարագրել իրականությունը: Ինչեւէ, ուրեմն ես էլ շտապեմ ազգային պատկանելիությանս գրավականը ներկայացնել. Թովմաս Սամուելյանի ելույթի ինքնակենսագրական մասը հարկ էր կրճատել, քանի որ ամբողջությամբ կրկնվեց ծրագրում տպագրված կենսագրականը: Այլապես՝ կեցցե՛ք, կազմակերպողներ:

Դահլիճից հեռացանք «Մայիսյան եռյակի» թողած սքանչելի տպավորության տակ եւ ունկնդիրների հոտնկայս ու որոտընդոստ ծափահարություններից ոգեւորված ու հպարտ, որ հայաբնակ բոլոր համայնքների բարբառներով ու լեզուներով խոսող ունկնդիրները նու՛յն հուզախառն ներշնչումն արտահայտեցին հայրենի երաժիշտների հանդեպ:

Վստահ ենք, որ այդ ոգով էլ Համազգայինը կշարունակի իր օգտաշատ գործունեությունն ամենուրեք, միշտ փարած մնալով հայ արվեստին ծառայելու բարձր նպատակին, անտեսելով խոչընդոտներն ու հոռետեսներին:

**ԱՐԵՎԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Նիւ Եորք**

# Կրկեսի մոգական աշխարհը առաջին անգամ Արցախում

Երեւանյան կրկեսի թատերախումբը համերգային շրջագայության կմեկնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Հայրենի կրկեսային արտիստները վառ ներկայացում են նախապատրաստել Արցախի մեր հայրենակիցների համար, որոնց ջերմ հյուրընկալությունը կվայելեն հունիսի 30-ից հուլիսի 6-ը:

Մայրաքաղաք Ստեփանակերտում եւ Արցախի տարբեր շրջաններում, ԼՂՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, նախատեսված է երեւանյան կրկեսի 6 ելույթ՝ կրկեսային բազմաժանր ծրագրով:

«Կրկեսային կոլեկտիվի ներկայացնելիք ծրագիրը մեր հանդիսատեսներին ուրախություն կպարգեւի իր էներգետիկայով եւ կհրավիրի հրապուրիչ ճամփորդություն դեպի իլյուզիաների, էքստրեմալ մարմնամարզության, վիրտուոզ ձեռնածության եւ կլոունադայի հեքիաթային աշխարհ: Մենք առաջին անգամ ենք շրջագայության մեկնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Մանրակրկիտ նախապատրաստվել ենք: Ծրագրում ընդգրկել ենք նաեւ Նաիրա Պետրոսյանի ղեկավարած Լեոնիդ Ենգիբարյանի անվան կրկեսային ստուդիայի դեբյուտանտներին: Ի դեպ, համերգային շրջագայության ընթացքում ունենալիք ելույթների ծրագիրը եւս կազմել է Նաիրա Պետրոսյանը»,- նշում է կրկեսի գեղարվեստական ղեկավար **Սոս Պետրոսյանը**:

Այս շրջագայության ընթացքում կրկեսային կոլեկտիվը ելույթներ կունենա նաեւ ԼՂՀ զորամասերում: Այդ ծրագիրն իրականացվելու է Հայաստանի ՊՆ նախաձեռնությամբ:

Ամռան ընթացքում, արցախյան շրջագայությունից հետո, մեր կրկեսային արտիստները կշարունակեն Հայաստանի մարզերում արտագնա ներկայացումներով հանդես գալու ծրագիրը: Հիշեցնենք, որ մինչ այժմ երեւանյան կրկեսը ներկայացումներով հանդես է եկել Լոռու եւ Տավուշի մարզերում տեղակայված զորամասերում:

**Տեղեկանքի կարգով**. Մոտ օրերս Երեւանում դրվելու է կրկեսի նոր շենքի հիմքը: Կրկեսի նոր շենքն, ինչպես հայտնի է, կառուցվելու է նախկինի տեղում: Նախատեսվում է կրկեսի նոր շենքը շահագործման հանձնել 2014 թվականի վերջին: Նոր շենքի վերջնական նախագիծը, որը պատրաստել է ճարտարապետ Վահագն Վերմիշյանը, հաստատվել է օրերս: Կրկեսի նոր շենքը կրկնելու է հին արտաքին տեսքի ճարտարապետական որոշ տարրեր: Իսկ շենքը լիովին համապատասխանելու է նման կառույցների համար սահմանված միջազգային բոլոր չափանիշներին, նախկինում եղած 1560-ի փոխարեն ունենալու է 2000 հանդիսատեսի համար նախատեսված նստատեղ, բացի դրանից՝ 3 փոխարկվող մանեժ է ունենալու: Բուն շենքը մոտ 6 մետր ավելի բարձր է լինելու եւ հագեցած է լինելու ժամանակակից բեմական տեխնիկայով: Հիշեցնենք, որ Երեւանի կրկեսի շենքը որոշվեց քանդել, երբ փորձագետները հանգեցին եզրակացության, որ աննպատակահարմար է վերակառուցել եղած հին շինությունը:

**ՆԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
**Հայաստանի կրկեսային գործիչների միության մամուլի ծառայության ղեկավար**

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ**

Համալսարանի փաստաթղթաշրջանառության ապահովման խումբ - մասնագետի 2 թափուր տեղի համար հետևյալ կարողություններով՝

♦ Առնվազն բակալավրի կամ մագիստրոսի, կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան

♦ Հայերեն լեզվի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման լավ իմացություն և հմտություններ,

և գործառույթներով՝

♦ Համալսարանի փաստաթղթաշրջանառության նախապատրաստման աշխատանքների իրականացում, ելք-մուտք արվող փաստաթղթերի գրանցում, առաքում

♦ Համալսարանի ստորաբաժանումների հրամանների գրանցում և առաքում համապատասխան անձանց

♦ Համալսարանի նամակագրության վարում, գրանցում

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում ռեկտորի անունով / նշել այն աշխատատեղը, որին հավակնում է դիմող անձը/
- Ինքնակենսագրություն
- Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
- Անձնագրի պատճենը
- Լուսանկար 1 հատ
- Աշխատանքային գրքույկի պատճենը:

*Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 10 օր սույն հայտարարության հրապարակման օրվանից:*

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, 200 սենյակ,
հեռ՝ 59-70-84:

ԱԶԳ

# Մարզական

## «Արարատ-73» թիմին նվիրված հուշարձանախումբ կկերտվի

Հանրային խորհրդի տուրիզմի, առողջ ապրելակերպի եւ կուրորտների հարցերի ենթահանձնաժողովի նիստի օրակարգում «Արարատ-73» ֆուտբոլային թիմի 40-ամյա հոբելյանի առթիվ ֆուտբոլիստների եւ մարզիչների կիսանդրիների պատրաստման եւ «Հրազդան» կենտրոնական մարզադաշտի շրջակա տարածքում տեղադրելու հարցն էր: Նախաձեռնությունը ենթահանձնաժողովի նախագահ Կառլեն Հարությունյանինն է: Նրա խոսքով՝ նման նախաձեռնություններ իրականացվել են ԱՊՀ բազմաթիվ երկրներում:




Նիստին մասնակցում էին Հանրային խորհրդի անդամ, Ֆինանսատնտեսական եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Վազգեն Սաֆարյանը, «Արարատ-73»-ի լեգենդար ֆուտբոլիստներ Արկադի Անդրեասյանը, Սուրեն Մարտիրոսյանը, ՀՀ վաստակավոր մարզիչներ Հարություն Քեհեյանն ու Հովհաննես Աբրահամյանը, հայտնի սպորտային մեկնաբան Սուրեն Բաղդասարյանը, ենթահանձնաժողովի անդամներ, սպորտի ոլորտի ներկայացուցիչներ: Նախաձեռնության նպատակը ոչ միայն «Արարատ-73»-ի փառահեղ հաղթանակի հեղինակներին վերհիշելն ու նրանց երախտագիտություն հայտնելն է, այլեւ նոր սերնդի մարզիկներին ոգեւորելն ու ֆուտբոլի զարգացմանը նպաստելը:

Քննարկման ընթացքում առաջարկվեց կիսանդրիների գաղափարը փոխարինել ֆուտբոլային հուշարձանախմբի գաղափարով՝ մարզիկներին ու մարզիչներին կերտելով ֆուտբոլային դաշտում՝ խաղի պահին: Գաղափարն ընդունվեց բոլորի կողմից՝ հատկանշական համարելով, որ «Արարատ-73»-ի հաղթանակն առաջին հերթին թիմային հաղթանակ է:

Ներկաները հիշեցին թիմի հաղթանակը՝ նշելով, որ այն վերածվել էր համազգային տոնի եւ կարեւորեցին ֆուտբոլային ոգեւորության արթնացումը հանրության շրջանում: **Կառլեն Հարությունյանն** իր մտահոգությունը հայտնեց ֆուտբոլի վետերանների ներկայիս սոցիալական վիճակի վերաբերյալ՝ կարեւորելով նրանց նկատմամբ պետական աջակցությունը: Նա առաջարկեց, որպեսզի Հանրային խորհուրդն այդ հարցը նույնպես բարձրացնի:

**Սուրեն Բաղդասարյանն** իր հերթին կարեւորեց ֆուտբոլիստների վաստակն ըստ արժանվույն գնահատելու անհրաժեշտությունը եւ հայտնեց, որ ամեն ինչ կանի, որպեսզի հուշարձանախմբի ստեղծման գաղափարն իրականություն դառնա: Նա հայտնեց, որ այժմ գիրք է գրում «Արարատ-73»-ի մասին: Նրա կողմից բարձրացվեց նաեւ «Արարատ-73»-ի թանգարան հիմնելու հարցը:

Վազգեն Սաֆարյանն, ամփոփելով նիստը, հույս հայտնեց, որ հուշարձանախմբի ստեղծման գաղափարը դրական արձագանք կստանա հանրության շրջանում, ինչը կնպաստի դրա իրականացմանը: Նա հայտնեց, որ բարձրացված հարցի վերաբերյալ ՀԽ նախագահ Վազգեն Մանուկյանի կողմից նամակ կհղվի ՀՀ վարչապետին, Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարին եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահին: Նախաձեռնության հետագա գործունեությունը համակարգելու նպատակով կստեղծվի աշխատանքային խումբ: Վազգեն Սաֆարյանը նաեւ առաջարկեց Հանրային խորհրդում կազմակերպել քննարկում ֆուտբոլի ներկա իրավիճակի եւ զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ հրավիրելով ոլորտի պատասխանատուներին եւ շահագրգիռ անձանց:

## ՀՀ հավաքականն իր արժեքով 3-րդն է նախկին ԽՍՀՄ-ում

Transfermarkt.de կայքի համաձայն, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստների տրանսֆերային ընդհանուր արժեքը 45 մլն 900 հազար եվրո է: Այս ցուցանիշով ՀՀ հավաքականը նախկին ԽՍՀՄ երկրների հավաքականների ցանկում զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը: Ցուցակը գլխավորում է Ռուսաստանի հավաքականը՝ 182,8 մլն եվրո: 2-րդ տեղում Ուկրաինայի ընտրանին է՝ 134,5 մլն եվրո: Վրաստանը 28 մլն եվրոյով 4-րդն է, իսկ հնգյակը եզրափակում է Բելառուսը՝ 26,15 մլն եվրո: Լավագույն տասնյակում են նաեւ Լատվիան՝ 17,325 մլն, Ուզբեկստանը՝ 16,4 մլն, Մոլդովան՝ 12,975 մլն, Լիտվան՝ 10,525 մլն եւ Ադրբեջանը՝ 9,475 մլն:




Իսկ եթե վերցնենք աշխարհի մակարդակով, ապա Հայաստանի հավաքականը ֆուտբոլիստների արժեքով 46-րդն է: ՀՀ հավաքականում ամենաբարձր տրանսֆերային արժեքն ունի Հենրիխ Մխիթարյանը՝ 22 մլն եվրո: Յուրա Մովսիսյանի տրանսֆերը գնահատվում է 7,5 մլն եվրո, Արաս Օզբիլիսինը՝ 6,5 մլն:

## Առաջին խաղը կկայանա Սան Մարինոյում

**Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Գյումրիի «Շիրակը» չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում մրցելու է Սան Մարինոյի «Տրե Պենեի» հետ: Վիճակահանությամբ մրցակիցների առաջին հանդիպումը պետք է կայանար Գյումրիում: Սակայն «Տրե Պենեի» ներկայացուցիչները խնդրել են, որ առաջին խաղը կայանա Սան Մարինոյում: Մրցակցի խնդրանքը «Շիրակը» չի մերժել:**

**Այսպիսով, հուլիսի 2-ին «Շիրակը» կհյուրընկալվի «Տրե Պենեին»: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 23-ին: Պատասխան հանդիպումը տեղի կունենա հուլիսի 9-ին Գյումրիում: Հանդիպման սկիզբը՝ ժամը 17-ին:**

## Խուզարկություններ իտալական ակումբներում

Իտալիայի ֆինանսական ոստիկանությունը խուզարկություններ է սկսել ֆուտբոլային 41 ակումբների գրասենյակներում, որոնցից 18-ն A սերիայի մասնակից թիմեր են: Ակումբները մեղադրվում են հարկերի վճարումից խուսափելու եւ ֆինանսական չարաշահումների մեջ ֆուտբոլիստների տրանսֆերային գործարքներն իրականացնելու ժամանակ: A սերիայի ակումբների թվում են նաեւ «Յուվենտուսը», «Միլանը», «Լացիոն»:

### ՇԱԽՄԱՏ

## Մատիկոզյանի հերթական հաջողությունը




**Միջազգային վարպետ Անդրանիկ Մատիկոզյանը 4-րդ անգամ նվաճեց Հարավային Կալիֆոռնիայի չեմպիոնի տիտղոսը: ԱՄՆ-ի Մոնթերեյ քաղաքում շրջանաձեւ մրցակարգով անցկացված մրցաշարում Մատիկոզյանը 7 հնարավորից վաստակեց 5 միավոր եւ արժանացավ գլխավոր մրցանակին:**

**Հայ շախմատիստը պարտություն չկրեց: Նա հաղթեց Ջոն Դանիել Բրիանտին, Ռոման Յանկովսկուն եւ Դիոնիսիո Ալդամային, ոչ-ոքի խաղաց Ջուլիան Լանդավի, Ալեքսանդր Կրետչետովի, Էնրիկո Սեւիլիանոյի եւ Մելիքսեթ Խաչիյանի հետ: Վերջինս 4,5 միավորով գրավեց 2-րդ տեղը: Նա նույնպես մնաց անպարտելի:**

## «Շախտյորը» հավանաբար տուգանի Մխիթարյանին

**Հենրիխ Մխիթարյանի «Լիվերպուլ» տեղափոխվելու գործընթացում լրիվ անորոշություն է տիրում: Այս օրերին Հենրիխը Փարիզում իր արձակուրդն է անցկացնում, մինչդեռ նա պետք է հունիսի 23-ին միանար «Շախտյորի» իր թիմակիցներին: «Շախտյորի» գլխավոր տնօրեն Սերգեյ Պալկինն այդ առնչությամբ հետեւյալն է նշել. «Թե ինչ պատճառով Հենրիխ Մխիթարյանը չներկայացավ հավաքին, մեզ հայտնի չէ: Եթե Մխիթարյանը մոտ օրերս չհայտնվի թիմում, ապա ստիպված կլինենք նրան տուգանել: Նա «Լիվերպուլի» հետ ոչ մի շփում չունի: Համոզված եմ, որ ակումբի հետ Մխիթարյանի բանակցությունների մասին լուրերն ընդամենը խոսակցություններ են: «Շախտյորը» նրա տրանսֆերի հարցով «Լիվերպուլից» առաջարկություն չի ստացել: Որեւէ ենթադրություն չունեմ, թե ինչու է Մխիթարյանը բացակայում հավաքից: Լավ կլիներ, որ նրանից հարցնեք: Հաստատ գիտեմ, որ Հենրիխը խաղընկերների եւ մարզիչների հետ ոչ մի կոնֆլիկտ չունի, «Շախտյորից» հեռանալու ցանկության մասին նրանից ոչինչ չենք լսել»:**

## Սամուել Սեւյանը 2-րդ մրցանակակիր

**12-ամյա ՖԻԴԵ-ի վարպետ Սամուել Սեւյանը դարձավ ԱՄՆ-ի մինչեւ 20 տարեկան պատանիների շախմատի առաջնության 2-րդ մրցանակակիր: Սենթ Լուիս քաղաքում անցկացված մրցաշարում հայ պատանին 9 հնարավորից վաստակեց 6 միավոր եւ արժանացավ 2000 դոլար պարգեւավճարի: Նա լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնպիսի արդյունքի հասած Լուկ Հարմոն-Վելոտիից: Սեւյանն ընդամենը կես միավոր զիջեց մրցաշարի հաղթող Դանիել Նարոդիցկուն:**

**Սամուել Սեւյանը հաղթանակներ տոնեց Լուկ Հարմոն-Վելոտիի, Աթիլիա Շեթի, Կայդեն Տրոֆի եւ Սարահ Չիանգի նկատմամբ, հաշտություն կնքեց Ռոբերտ Պերեսի, Ջեֆրեյ Քսիոնգի, Դանիել Նարոդիցկու եւ Վիկտոր Շենի հետ պարտիաներում: Միակ պարտությունը Սեւյանը կրեց մեկնարկային տուրում՝ զիջելով Յան Լիոուին:**

## Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը գլխավորում է աղյուսակը

Բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հիանալի է հանդես գալիս Բուլղարիայում անցկացվող շախմատի մրցաշարում: 6 տուրից հետո նա վաստակած 5,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Մխիթարյանը հաղթել է Վիտալի Գուրվիչին, Բոիլ Բանովին, Սերգեյ Վեդմեդիուկին, Յայարամ Աշվինին, Սունդար Շյամին եւ ոչ-ոքի է խաղացել Լուիս Աբդալայի հետ:

5-ական միավորով առաջատարին հետապնդում են Պետար Արնաուդովը, Ռադոսլավ Դիմիտրովը եւ Եվգենի Յանեւը: Բուլղարահայ Վալենտին Փանբուկչյանը 4 միավորով 20-րդ տեղում է:

## Արթիկի թիմը 2-րդ տեղը գրավեց

Բաթումում ավարտվեց Վալերի Ախտաբաեւի բասկետբոլի պատանեկան հուշամրցաշարը, որին մասնակցում էր Արթիկի թիմը: Մեր բասկետբոլիստները 3 անընդմեջ հաղթանակ տոնելով, մտել էին եզրափակիչ: Վճռորոշ խաղն աչքի ընկավ պայքարի արտակարգ լարվածությամբ: Արթիկցիները մրցակցին զիջեցին մեկ միավորի տարբերությամբ (66:67) ու գրավեցին 2-րդ տեղը:

## «Գանձասարի» հաղթանակով

Եվրոպայի լիգայի մրցաշարին նախապատրաստվող Կապանի «Գանձասարը» ստուգողական խաղում 2-0 հաշվով հաղթեց Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականին: Գոլերի հեղինակներ դարձան Արթուր Ավագյանն ու Հայրապետ Ավագյանը: Հունգարիայում փորձաշրջանի մեկնած Արտակ Դաշյանը միացել է իր խաղընկերներին:

## Ռաֆայել Նադալի սենսացիոն պարտությունը

Լոնդոնում սկսված թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի մեկնարկում խոշոր անակնկալ գրանցվեց: Արդեն առաջին շրջանում իսպանացի Ռաֆայել Նադալը դուրս մնաց պայքարից՝ զիջելով բելգիացի Սթիվ Դարսիսին (6-7, 6-7, 4-6): Հիշեցնենք, որ Նադալը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 12 անգամ հաղթող է ճանաչվել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

